

աամուտ լինել տեսնելու և ճանաչելու Նորանս  
 Թովմասի պէս Թերազաւատները հե-  
 տամուտ կլինէին և որպէս զի յարու-  
 թեան փառքի մէջ Նորան տեսնեն և Տէր  
 ու Աստուած խոստովանեն, պէտք է նախ  
 ստրկական խոնարհ վիճակի մէջ տեսած  
 լինին. պէտք է քայլ առ քայլ հետեւեն  
 Նորա երկրաւոր կեանքին, այնպէս խորա-  
 սուզուին հոգեով այս հրաշալի կեանքի ման-  
 րամանութեանց մէջ, որ հեղ և խոնարհ  
 Մարդոյ Որդւոյ պատկերը իւր ամբիժ մաք-  
 րութեամբ նկարուի նոցա ներքին աեսու-  
 թեան առջ և համոզուին թէ ոչինչ չկայ  
 այս պայծառ պատկերի մէջ նիւթական ան-  
 ցաւոր աշխարհին պատկանող թէ յիրաւի  
 ինչպէս սիրելի աշակերտն է ասում, մարդ-  
 կային աչքը արժանանում է այստեղ Աս-  
 տուած մարմնացած տեսնելու և մարդկային  
 ձեռքը՝ «շօշափել ի վերայ Բանին կենաց»  
 Այդպիսի համոզում ունենալուց յետոյ խա-  
 չի վերայ գամուած Աստուծոյ Որդին իբրև  
 տարօրինակ առեղծուած չի ներկայանայ մեզ  
 այլ ևս այլ իբրև աստուածային բոլոր խոր-  
 հուրքները բացատրող ամենավսեմ մի խոր-  
 հուրք մեզ ոչ միայն անհնարին չի թուի  
 ընդունել թէ Նա յարութիւն է առել մա-  
 հուան զրկից, այլ և ստիպուած կզաննիք  
 մեզ վկայել ու Պետրոս առաքեալի հետ թէ  
 «ոչ էր հնար ըմբռնել Նմա ի մահուանէ»  
 ամենայն երկիւզածութեամբ ու երախտադի-  
 տութեամբ ծունկ կխոնարհենք Նորա ա-  
 սաջ և Տէր ու Աստուած կխոստովանենք  
 այն վեհ խորհրդով որ Առաքեալն է պահան-  
 ջում. «Ձայն խորհեցի իւրաքանչիւր որ ի  
 ձեռք, որև ի Բրիստոս Յիսուս, որ ի կերպա-  
 րանս Աստուծոյ է՝ ոչինչ յափշտակութիւն  
 համարեցաւ զլինելն հաւասար Աստուծոյ, այլ  
 զանձն ունայնացոյց, զկերպարանս ծառայի  
 առեալ ի նմանութիւն մարդկանց եղեալ  
 և կերպարանօք գտեալ իբրև զմարդ խոնար-  
 հեցոյց զանձն լեալ հնազանդ մահու չափ  
 և մահու խաչի վասն որոյ և Աստուած զՆա  
 առաւել բարձրացոյց և շնորհեաց նմա անուն

որ ի վեր է քան զամենայն անուն. զի յա-  
 նուն Յիսուսի Բրիստոսի ամենայն ծունր  
 կրկնեցի, երկ՝ աւորաց և երկրաւորաց և  
 սանդարամեականաց, և ամենայն լեզու խոս-  
 տովան լիցի թէ Տէր է Յիսուս Բրիստոս՝ ի  
 փառս Աստուծոյ Հօր»<sup>\*\*\*</sup>



ՅՈՒՆԵԿԱՆ ՎԸՆԵԿԱՆՈՒԹԻՒՆԸ.  
 (Նարումակութիւն) \*

Վանականութեան և նրան շրջապատող ժո-  
 ղովորդի մէջ եղած յարաբերութիւնը ամեն աեղ  
 հիմք գործաւ առաքելութեան (Mission) զարգաց-  
 ման, Քրիստոնէութիւնը ինչպէս արեւելքում, նոյն-  
 պէս և արեւմուտքում՝ առաջ զլիսուորապէս քա-  
 ղաքներում արմատացաւ և պետական յունական  
 եկեղեցին, քրիստոնէութեան յաղթանակից յե-  
 տոյ՝ շատ քիչ ետանդ ցոյց տուեց նրա ազդեցու-  
 թիւնը աւելի հեռաւոր շրջաններում տարածելու.  
 Քորնպոսկոպոսները, որոնց աթոռատեղիները զիւ-  
 դական ժողովորդի քրիստոնէացման համար կենտ-  
 րոնատեղիներ պիտի լինէին, շատ կանուխ զրկուե-  
 ցին իրենց կոչումից. դէպի այս նպատակը առա-  
 ջին քայլ արուեցաւ արդէն Անկիւրիոյ ժողովում  
 314-ին, Գորա փոխարէն անապատում քաշուած  
 վանական գաղթականութիւնները կամ վանքերը:

\*\*\* Փիլիպ. Բ. 5—11. Այս նշանաւոր խոս-  
 քերի միտքը ազատ կերպով թարգմանած, հետեւե-  
 նալն է. «Ձեր մէջ իշխող սկզբունքը թող այն լի-  
 նի, ինչ որ էր Յիսուս Քրիստոսի մէջ. որ թէպէտ  
 Աստուծոյ կերպարանք ունէր՝ Աստուծոյ հաւասար  
 լինելը մի աւար շհամարեց (որ պինդ պահել  
 պէտք էր և ձեռքից չթողնել), այլ իւրն իրեն  
 զրկեց՝ ստրուկի կերպարանք առնելով, մարդու նը-  
 մանութիւն ստանալով և իբրև մարդ ներկայանա-  
 լով (որով) խոնարհեցրեց իրեն և եղաւ այնչափ  
 հնազանդ, որ մահ յանձն առաւ, այն ևս խաչի  
 մահ, Աւստի և Աստուած նորան խիստ բարձրացրեց  
 և շնորհեց նորան այն անունը, որ ամեն անունից  
 բարձր է, որպէս զի Յիսուսի անուամբ ամէն ծունկ  
 խոնարհի թէ երկնաւորների, թէ երկրաւորների և  
 թէ ստորերկրայինների և ամեն լեզու խոստո-  
 վանէ, թէ Յիսուս Քրիստոսը Տէր է, ի փառս Հայր  
 Աստուծոյ»:

\* Ա. Յովհ. Ա. 1. Յովհ. Ա. 14.  
 \*\* Գործք Բ. 24.

\* Տէս. Արարես 1899 թ. համար 4 և 7 նր. 106

շրջակայքի քրիստոնեաների կրթավայրեր դարձան, որտեղից նաև խիական առաքելութիւններ էին ուղարկում մերձակայ և հեռուոր հեթանոս ազգերի մօտ: Աւանականներն էին, որ քրիստոնէութիւնը մինչև Ասիոյ խորքերը տարածեցին. վանականութիւնն էր, որ քրիստոնէական ժառանգութիւնը շահեցնելով, որքան հնարաւոր էր պահպանեց: Երբ արաբական աւերածի փոթորիկը յունական եկեղեցու վրայ խուժեց, եպիսկոպոսները շատ շուտով տեղի տուին չարիքի առաջ: Արդէն Տրուլլանեան ժողովը տալիս է այնպիսի վճիռներ, որոնց մէջ եպիսկոպոսները մեղադրուած են ակներև անհաւատարմութեան համար: Բայց վանականութիւնը իւր կայաններում սպասեց մինչև վերջը, և վանքերը մինչև օրս իսլամի յափըշտակած երկիրներում քրիստոնէութեան ամենաանառիկ պատնէշներն են:

Այսպէս ուրեմն վանականութիւնը առանց իւր կողմից մի նպատակաւոր ձգտում ցոյց տալու, յունական եկեղեցու մէջ իսկապէս առաջնակարգ տեղ գրաւեց. նա բարձրագոյն բարոյական հնդիւնականութիւնն էր. եկեղեցական ամենակարևոր պաշտօնները, մանաւանդ հոգիների հօգսը՝ նրան էր բաժին ընկել. այս պատճառով ևս նրա ազդեցութիւնը չափազանց մեծ էր, որովհետև այդ ազդեցութիւնը ոչ թէ բանի միջոցների, այլ անհատական առանձնայատկութեանց վրայ էր հիմնուած:

Զարմանալի կլինէր, եթէ եկեղեցու հոգևոր կեանքը այս ազդեցութեան հետքերը չկրէր, եթէ վանականութեան յաջողուած շլինէր նաև «աշխարհի որդեց» քրիստոնէութեան վրայ իրենց կիկքը գրողմել: Իւր ամբողջ էութեամբ վանականութիւնն այնչափ արագ կերպիւ ներգործութիւն ունեցաւ արևելեան եկեղեցու մէջ, որ շուտով նրա ուշադրութիւնը քրիստոնէութեան գործնական կողմի վրայ դարձաւ: Եկեղեցին այստեղ առաջնորդի պէտք ունէր: Նորա ցոյց տուած եռանդը դաւանական խնդիրների լուծման համար պէտք է իւր անդամների վրայ այն տպաւորութիւնն աւնէր, թէ քրիստոնէութեան մէջ էականը ուղղափառութիւնն է, Թէև մինչև այժմ պնդողներ կան, որ յունական վանականութիւնն ևս առանձին հաճոյքով մասնակցել է դաւանական վէճերին: Բայց այդ մի առասպել է միայն: Ս. Բարսեղի ընդունած դրութիւնը վանականութեան համար միշտ օրինակելի է եղել, նա միշտ զգուշացրել էր շեշտելով, «Երբորդութեան մասին ոչ մի անօգուտ վիճարանութիւն չանել և պատճառը հարցնողներին պարզապէս պատասխանել, մենք հաւատում ենք՝ նրան, որի անուամբ մկրտուած ենք»: Վանականութեան համոզմամբ հաւատոյ գաղտնիքների հիմքն այնքան խոր է, որ յանդիմութիւն պէտք է համարուէր նրանց քննութեամբ դրաղ-

ուել: շատ շատ կարելի էր նրանց խորհուրդը գուշակել կամ նկատել, բայց երբէք մարդկային սահմանափակ խելքով բուն էութիւնը հասկանալ և ապացուցանել:

Վանականութիւնն ուրեմն յակամայից է զբաղւում այդ խնդիրներով, որ կրկին և կրկին անգամ եկեղեցու մէջ յարուցանում էին հետեականօրէն մտածելու տենդով բռնուած մարդիկ, նախկին գարբի մուկտանդութիւնը արդիւնք է անօգուտ տեսական վէճերի և գործնական բարեպաշտութեան պակաս եռանդի պատճառով յառաջացած զարոյթի, Իսկական խոր հետաքրքրութեամբ վանականութիւնը մասնակցում էր վէճերին միայն այն ժամանակ, երբ մի որոշում ուղղակի կրօնական կեանքը շօշափում էր: Արդիւնէսի դէմ առեւութիւնը բորբոքուեց, երբ նա ժխտեց դժոխային պատիժների յաւիտեականութիւնը, որովհետև դրանով բարոյական կեանքի զարկերակը կտրուած էին համարում: Ինչ որ մի անգամ իրր դաւանանք հաստատուած էր, վանականութիւնը ընդունեց իրր սեպհականութիւն, առանց հաւատքը հասկանալի կերպով ձևակերպել ձգտելու: Նրա սրտի իղձն էր բարեպաշտութեան մէջ մարդիկ: Այսպէս յիրաւի վանականութիւնը ուզում էր ուղղափառ լինել, բայց քարոզում էր նաև անդադար, որ ուղղափառութիւնը միայն բաւական չէ, էականը և վճռականը Աստուծոյ պատուէրների կատարումն է: Սիմէօն Նոր աստուածաբանը, ակն յանդիման նախատում է պատրիարքին, թէ նա եկեղեցին կործանում է՝ եպիսկոպոսացուներից միայն ուղղափառութիւն պահանջելով, բառի բուն մտքով ուղղափառ նա է ամենից առաջ, ով ուղիղ հաւատոյ համաձայն կեանք է վարում:

Բայց վանականութիւնը ոչ միայն եռանդով գործնական բարեպաշտութեան գիտակցութիւնը զարթեցրեց եկեղեցու մէջ, այլ նաև բարոյական աշխարհայեցողութիւնը զտեց և խորացրեց, Արևմտեան եկեղեցին արդէն այն ժամանակ վաղուց ի վեր վտանգաւոր ճանապարհի վրայ էր: Այստեղ ամենավնասակար ազդեցութիւն էր գործել բարոյական գաղափարների վրայ այն սկզբունքը թէ՛ գործեր կան, որոնք ըստ ինքեան բարոյական արժէք ունեն, որոնց արտաքին ձևական կատարումը արգարութեան նշան կարող է համարուել և Աստուծուն ընդունելի լինել: Այս գաղափարի հետեակական զարգացումը յառաջ բերաւ խոստովանութեան կարգը իւր բարդ կանոններով, Յունական եկեղեցուն ծանօթ չէ բարոյական աշխարհայեցողութեան այս բոլորովին ստոր հաշուական ձևը: Այստեղ ոչ մի հասկացողութիւն չկայ «արժանիքի» (meritum, verdienst) և «հատուցման» (satisfactio, genugthuung) մասին:

Յունական եկեղեցին շատ լաւ ճանաչում և

զնահատում է որոշ աչքի ընկնող բարոյական երեւոյթներս ինչպէս օր. ամուրի կեանք, պահք, ոգորմութիւն, նա իւր հաւատացեալներից աւելի խիստ կարելի է ասել՝ ճգնաւորական պահանջներ է անում, քան արեւմտեան եկեղեցին. բայց երբէք չի մոռանում, որ ճգնութիւնը վարժութիւն է, և վարժութիւն պիտի լինի միայն բարոյական նպատակների հասնելու համար, և որ անձնուրացութիւնը այն ժամանակ միայն խորհուրդ և արժէք ունի, երբ զբանով ճշնել կարելի է միտքը հակումն, կամ ինչպէս իրենք են ասում, երբ գրանով մի կիրք է բժշկուում. Յունական եկեղեցին ևս տածում է այն ակնկալութիւնը, թէ իւրաքանչիւր արտակարգ գործ Աստուծոյ կողմից առանձին վարձատրութեան պիտի արժանանայ. բայց երբէք չի մոռնում որ և է իրաւունքի կամ պահանջի և կամ գործի նախօրոք չափած ձեւած արժէքի մասին նմանազրուում է, թէ արտաքոյ կարգի բարի գործ կատարողը Աստուծոյ մտերիմն է դառնում և պարզերես նորա առաջ կենել կարող է, ուրեմն և այդպիսի մէկի խնդիրներն աւելի սիրով կշտուին:

Եկեղեցին ջանք էր գործ զնում այստեղ, որ ճգնաւորական բարձր առաքինութիւնների կարգում ամենանման բարոյական սկզբունքները՝ ներողամտութիւն, գլխարտութիւն, սէր դէպի մերձաւորը՝ անփութութեան չմատուցին, Ռուսաց եկեղեցու ամենազրաւիչ առանձնայատկութիւններից է զոր օրինակ այն, որ հաւատացեալները խորապէս զգում են կարօտեալներին օգնութեան հասնելու պարտականութիւնը, Յունական եկեղեցին ամենից աւելի վանականութեանն է պարտական, եթէ այս բարոյական ձգտումը աւելի մաքուր մնաց և մանկական անարատութեամբ աւելի իւր՝ քան արեւմտեան եկեղեցու մէջ, Արովհետեւ վանականը ճգնում էր միմիայն՝ Բրիտոսի ճշմարիտ աշակերտ լինել, որովհետեւ բարձրագոյն ճգնաւորական սկզբունքը՝ ամբողջ կեանքի սրբազորումը, նոյն իսկ վանականութեան կողմից իբր միջոց էր նկատուում ներքին կատարելութեան հասնելու, ուստի և միշտ վառ մընաց այն գիտակցութիւնը, թէ բարոյական նպատակը անձի կատարելագործումն է, և թէ այս նըպատակին հասնելը պարզ պարտաւորութիւն է, Այն հասկացողութիւնը, թէ բարոյական նպատակը սեպհական անձի կատարելութիւնն է, ստիպեց վանականութեան խիստ քննութեան ենթարկել իւր անձը, Աւանականները գիտեն, որ մեղքը սրտի շար խորհուրդներիցն է բղխում, զրա համար նոքա ամէնից առաջ այդ խորհուրդներով են զբաղուում, որոնց անձնելիան տէրը պիտի լինին, որովհետեւ զբանով է սխտում ինքնակրթութիւնը, Աւանականի զրական նպատակն է՝ իւր բոլոր մտածումները Աստուծոյ վրայ կեդրոնացնել, ինքնիրեն այնպէս

մարդելի որ այդ մտածութիւնն Աստուծոյ մասին ամէն տեղ նրան ուղեկցէ և նոյն իսկ ամենաշնչին գործերի ժամանակ նրա ներքին գրգիռը լինի:

Մարդ սպառնում է ներկոյ ժամանակի դիւտեր տեսնելով նրանց գործադրած միջոցների մէջ: Արդէն ըստ Աթմանասի Անտոնիոս վանականներին խորհուրդ է տալիս գրի առնել բոլոր այն մտքերը, որոնք օրուայ ընթացքում նրանց կյուղէին, նշանակելով նաև՝ ուզում են նոքա արդեօք ուրիշներին խոստովանել այդ, թէ ոչ, երեւոյթութիւնը վարժեցնելու ուրիշ շատ մարդներն եկուրտական հրահանգներն են յիշեցնում. բայց հետաքրքրականը ոչ թէ ինքնակրթութեան այս փոքր յատկանիշներն են, այլ այն հանգամանքը, որ գրանով ընդհանուր նշանակութիւն ունեցող մի բարդ հոգեւոր յառաջագիմութիւն տեղի ունեցաւ, Արովհետեւ սեպհական սրտի բժշկութեան խնդիրը վանականի հայնացքը դէպի մի նոր աշխարհ, այսինքն ներքին կեանքի աշխարհն ուղղեց, որից ստացած պատկերն այնպէս կախարհիչ է, որ առանց վարանելու ընդունել կարելի է, թէ նոքա հասած էին ամբողջ հոգեւոր կեանքի զարգացման մի բարձր աստիճանին, Ա. իոս. Թղթի է. զլխում նկարագրուած փորձառութիւնները այստեղ առաջին անգամ օրինակելի ձևով իրականանում են, Այստեղ տեսնում ենք նաև միանձնի իրրև մի նշանաւոր անհատի կրածներից և փորձաքններից քաղած խրատները: Մի ամբողջ գրականութեան առարկայ է ելել մեծ ճգնաւորների փորձերը և մտքերը՝ պատմուածքներով և խորհրդաւոր ասացուածքներով, համայնական սեպհականութիւն դարձնել:

Այն, ինչ որ յունական վանականութիւնը հասկացել և արել է, կարելի է համեմատել Օգոստինոսի արեւմտեան եկեղեցու մէջ տուած գործունէութեան հետ, Նրկու կողմից ևս այն գիտակցութեան են հասել, որ խնայ սեպհական մի աշխարհի կեդրոնն է և որ հենց այս աշխարհումն են մարդկութեան առաջադրած բարձրագոյն խնդիրները, Յունական եկեղեցին չէ կարող ջոյց տալ իւր ամբողջ գաւանութիւնը պարունակող գրական մի երկ, Օգոստինոսի համեմատութեամբ յոյն հեղինակները պակասաւոր են և խիստ վերացական, Բայց սրա պատճառը միայն այնպիսի հանձարի պակասութիւնը չէր, որ ներքին աշխարհը կատարելապէս ըմբռներ և նորա երեւոյթները պարզարարներ, Հետաքրքրական է այստեղ մի ուրիշ խնդիր՝ Յունական վանականութիւնը ի զուր չի կրկնել միշտ Պողոս առաքեալի խօսքերը. «Ձառ ի յետոյսն մոռացեալ է, և ի յառաջագէմսն նկրտեալ և մ», Յոյնը իւր գործը նրանով էր վերջացնում, որ պատահած դէպքերից կանոններ էր մշակում ապագայի համար, էական նշանակութիւն ունեցողը

նորա համար նոյն իսկ վճիռն էր: Այս գործնական  
 րնադրումի շնորհիւ է ձեռք բերել յունական վա-  
 նականութիւնը այն բոլորը ինչ որ մեզ զարմաց-  
 նում է յանձին իւր լուսագոյն ներկայացուցիչներին  
 — վճռականութիւնն րնադրութեան անդրադուլի  
 անդորրութիւնն և յարատե զուարթութիւնն: որ  
 ներքին ներգաշնկութեան արդիւնք է: Ո՞վ կա-  
 բող էր իմանալ որ այս մարդիկ իրենց դատողու-  
 թեան և վարմունքի մէջ ցոյց տուած վստահու-  
 թիւնը սեպհական անձի դէմ մզած սաստիկ կռուի  
 մէջ էին ձեռք բերել:

Ինչ որ վանականութիւնը դտել է և գործա-  
 գրելն ամբողջ եկեղեցու համար կարեւոր նշանա-  
 կութիւն է ունեցել: Աւելի նկատելի է այդ ազ-  
 դեցութիւնը քարոզութեան մէջ, թէպէտ յունա-  
 կան քարոզը իւր հիմնական րնադրութիւնը չպա-  
 հեց և վստ երեւակայութեան նկարագիրներին ըն-  
 դարձակ տեղ տուաւ: Էին ժամանակներից սկսած  
 շատ քարոզիչներ, մանաւանդ ս. Բարսեղ և Ոս-  
 կերներսն մարդկային հոգու խորերն են թախան-  
 ցում և անհատական կեանքը պատկերացնում:  
 Յունական նոյն իսկ ամենաճարտարաբանստ քա-  
 րոզները մեզ առանձին հաճոյք չեն պատճառում  
 այսօր: Նրանց մէջ շատ զօրեղ է հնչում հին ճար-  
 տասանութիւնը: Բայց մինչև օրս իսկ մեզ գրա-  
 ւում են նրանց այն մասերը, ուր քարոզիչներին  
 յաջողում է ընդհանուր մարդկայինը շոշափել:  
 իսկ գրանք հենց այն սկզբունքներն են որոնք վա-  
 նականութեան ազդեցութեամբ են յառաջ եկել:  
 նոյն իսկ րիւզանդական դասնարանութեան կոչոտ  
 հողի վրայ ծլում է վանականութիւնից ընկած մի  
 սերմ: Եթէ Յովհաննէս Գամակացու գլուխ գոր-  
 ծոց դաւանարանական երկասիրութիւնը համեմա-  
 տներ հնադոյն նման երկերի՝ մանաւանդ Գրիգոր  
 Նիւսացու մեծ ձկափշիտեան ճառի հետ իս-  
 կոյն տարբերութիւնը աչքի է ընկնում: Մինչ-  
 դեռ առաջին մէջ հեղինակը խորազննին հետեւ-  
 դականութեամբ զբաղում է հոգեբանական խն-  
 դիրներով, ր-ի մէջ մարդարանութիւնն (Anthropologie)  
 է զլիսաոր տեղ բռնում: Յովհաննէս Գամակացին  
 ոչ միայն մեղքով և կամքի ազատութեամբ է զրա-  
 զում: ինչպէս հները այլ խօսում է նաև հաճոյ-  
 քի և սահմանութեան զգացումների, երկիւղի, բար-  
 կութեան, երեւակայութեան կարողութեան, խելա-  
 մութեան (Apperception) մտածելու կարողութեան,  
 յիշողութեան, ցանկութեանց և կամեցողութեանց  
 մասին: Ի հարկէ նորա բացատրութիւնները վերջ-  
 նական չեն, արդէն հին փիլիսոփաները այդ դա-  
 զափարները իրենց ճշգրիտ սահմաններով մշակել  
 էին: Բայց լինչ պատճառով եկեղեցական հայրերը  
 կարեւոր համարեցին դաւանարանութեան մէջ այս-  
 պիտի խնդիրներով զբաղուել: Աւրիշ ոչ մի պատաս-  
 խան չենք կարող տալ այն հարցին, եթէ ոչ այն

որ վանականութիւնը արդէն հոգեբանական խն-  
 դիրների կարեւորութեան վրայ մատնացոյց էր արել:  
 Սրանով սկսում է նորից իւր կոխը այն միտքը  
 որը հին դրութիւնները ճնշել էին: Քրիստոնէու-  
 թիւնը իբր աշխարհայեցողութիւն խորտակեց  
 հին րնազանցութիւնը այն գիտակցութեամբ, որ  
 մարդ ամբողջ րնութեան հետ համեմատելով բար-  
 ձրագոյն արժէք ունեցող մի էակ է: Քրիստոնէու-  
 թիւնն առաջին անգամ գիտնականապէս ներկայա-  
 ցնողները այս գիտակցութիւնը մթնացրել են: Նորա  
 կարծել են, որ քրիստոնէութիւնը պաշտպանել և  
 նրա ճշմարտութիւնը ապահովացնել կարող են  
 նրա մտքերը փիլիսոփայական սկզբունքների հետ  
 կապելով: Նորա ընդունել են հին փիլիսոփայու-  
 թեան ուրուագիծը, որով մարդը հանդէս է գալիս  
 միայն իբր տիեզերքի մի մաս, իսկ փրկագործու-  
 թիւնը՝ իբր տիեզերարանութեան մասնաւոր մի  
 երևոյթ, որ իւր պատշաճ տեղն ունի տիեզերքի  
 զարգացման մէջ: Բուն քրիստոնէական գիտակցու-  
 թիւնը նորից զարթնելով մուտք չգտաւ ամբողջ  
 յունական եկեղեցու մէջ, Բայց այս միտքը միշտ  
 կենդանի մնաց, Արևելքում աճող միսիսիմոն որ  
 ետ չէ մնում ամենին արեւմտանից, մշակեց  
 այն: Յունական միսիսիմոնից ամենամեծը՝ Միսէն-  
 շտր աստուածաբանը († 1041), մի ամբողջ դրու-  
 թիւն ստեղծեց, որի հաստատուն յենակետերն էին  
 Աստուած և Հոգի: Ինչ որ այս շրջանակին չի յար-  
 մարում, ինչ որ անիմանալի է և անմիջական կը-  
 րծական կեանքի հետ կապ չունի, այստեղ լու-  
 թեան է տրուում: Թէպէտ և սորանով դաւանու-  
 թիւնը րննադատուած չէր համարուում, սակայն  
 և այնպէս ինքնախաբէութիւն էր կարծելը, թէ  
 դաւանութիւնը իւր տեղում բոլորովին անձեռն-  
 մխելի պիտի մնար, Անցեալի բեռը շատ ծանր էր  
 և դաւանութիւնը ձևակերպելու մեծամեծ դժուար-  
 ութեանց յիշատակը շատ զօրեղ, այնպէս որ միջ-  
 նադարեան յոյնի մտքովն անգամ չէր անցնում՝  
 գիտակցարար այդ հոյակապ շինութեան մի քարն  
 անգամ շարժել, Թէպէտ ուրեմն այսպէս կոչուած  
 ւստարկայական դաւանաքի (objektive Dogmen)  
 զարգացումը մի որոշ ժամանակից յետոյ կանգ էր  
 առել, բայց և այնպէս ներքին կեանքի երևոյթները  
 հայեցողութեան մշտական նիւթ էին, և այս տե-  
 սակէտից դաւանական զարգացումը իսկապէս եր-  
 րէք չի զարարել:

Այս երևոյթի եկեղեցու համար ունեցած  
 նշանակութիւնը հասկանալու համար ինկատի պիտի  
 առնել միջնադարեան յոյնի վերաբերումը դէպի  
 դաւանաքը: Որքան նա հպարտանում է հայրերի  
 ժառանգութեամբ, այնքան ևս մեծ յարգանքով է  
 վերաբերում դէպի նոցա մշակած դրութիւնը,  
 բայց ոչ ոք միայն իւր հաւատով իրեն կատարելա-  
 պէս ուրախ չի զգում, որովհետև ամեն ոք գիտէ

որ ուղղափառութեան նկղ շաղից աջ ու ճախ  
բաց անգունդներ են և որքան յաճախ որ եւ  
զաւանական խնդիր երևան է գալիս, այնքան ևս  
աւելի համոզուում են որ նոյնը հասարակափ  
յարգելի հիմունքներով հերքել կամ պաշտպանել  
կարելի է \* ։ Անականութիւնը եկեղեցուն նրանով  
ևս օգտակար եղաւ որ յայտնագործեց մի վիճակ  
որ մասնողութիւնը ազատ շարժուել կարող էր ։

Մինչև այժմ ասածներէց դեռ չի կարելի եզ-  
րակացնել որ վանական հոգին ինքնակրթութիւնը  
վանական լրջութիւնը՝ թափանցել էին նոյն իսկ ժո-  
ղովորդի գործնական բարոյական կենսքի մէջ ։  
Բայց այս տեսակէտից նշանաւոր է մասնաւորապէս  
վանական համարուած մի հաստատութիւն այսինքն  
խոստովանութեան խորհուրդի տարածումը ։ Եթէ  
խոստովանաբ ասելով սրտի խորհուրդների մասին  
պարտաւորեցուցիչ և կանոնաւոր կերպով հաշիւ  
տալն է հասկացուում, ապա կարելի է ասել որ  
այս հաստատութեան ստեղծագործողն ևս Բարսեղ  
Կեսարացին է ։ Խոստովանութեան կարգը բոլոր-  
վին համապատասխանում է նորա վանականութեան  
համայնական կենսքի մասին ունեցած դադափա-  
րին՝ այն համոզման որ անհատը միայն իբր մի  
մեծ ամբողջութեան անդամ կարող է կատարելու-  
թեան հասնել ։ զրանով նա ուզում էր ամբողջու-  
թեան հոգեկան ոյժերը անհատների առանձնական  
կարիքների համար օգտակար դարձնել ։ Այդ նպա-  
տակով նա պատուիրեց որ վանական համայնքի  
իւրօրանչիւր մի անդամ իւր սրտի թելագրու-  
թիւնները և մտորութիւնները խոստովանի մար-  
դոց մի մեծ կամ փոքր շրջանում որպէս զի բա-  
րին գիտակցութիւն և ամբացութիւն իսկ շարը ճնշուի ։  
Դրանով չէր մտածում ի հարկէ որ և է մէկին խոս-  
տովանելու ստիպել ։ Նա ի նկատի ունէր բոլոր մաս-  
նակցողների մէջ եղած ճշմարիտ եղբայրական յա-  
րարեութիւնը ։

Պաշտօնական եկեղեցին իւր գաստիարակ-  
չական գործունէութիւնը սահմանափակել էր  
մահացու մեղքերի (զլխաւորապէս՝ հերետի-  
կոսութեան, սպանութեան և անբարոյականու-  
թեան) համար միայն պատուէրներ տալով ։ Նա  
հաւատացեալներին թողել էր անորոշ վիճակի մէջ  
այն մեղքերի թողութեան նկատմամբ որոնք մա-  
հացու չէին ։ եկեղեցին յոյս էր տալիս թէ զատ-  
կից առաջ եղած մեծ պահքը բաւական է անցեալ  
տարուայ մեղքերը քաւելու համար ։ Թեպէտ վա-  
նականութիւնը այն միտքը յայտնեց որ թեթեւ  
մեղքերն իսկ պէտք է քահանային խոստովանել ։  
Բայց այս խրատին չհետևեցին այլ ընդհակառակն  
յառաջ եկաւ և դարգացաւ այն սկզբունքը թէ

ամեն ինչ անհրաժեշտ չէր մարդկանց խոստովա-  
նել ։ Արդէն Ասկերերան բաւական նրբազգաց զրտ-  
նուեցաւ խոստովանութեան վտանգաւոր կողմը ճա-  
նաչելու համար ։ Նա գիտէ որ ամբթխածութիւնը  
սպանել կարելի է և յունական եկեղեցու մէջ  
ուշ ժամանակներում մտաւ այս հասկացողու-  
թիւնը որ մեղքը աւելի է հաստատուում խոս-  
տովանութեամբ ։ Երկնց մեղքերի համար զղջացող  
հաւատացեալները նաև մի ուրիշ բան ի նկատի  
պիտի առնէին ։ Արդիւնէս որ առաջ թեթեւ մեղ-  
քերն ևս խոստովանելու խորհուրդ էր տալիս ըզ-  
գուշացնում է միտմամանակ՝ ամենքին չփտահա-  
նալ ։ որովհետև միայն հմուտ բժիշկը կարող է  
հիւանդութիւնը բժշկել ։ ուրեմն պէտք է քննել  
ո՞վ է վտահաւթեան արժանի ։ Այս ազդարարու-  
թիւնը խորապէս տպաւորուեցաւ յունական եկե-  
ղեցու բմբունման մէջ և երբ վանականների ազ-  
դեցութեամբ խոստովանութեան սովորութիւնը մը-  
տաւ այստեղ՝ հաւատացեալները սկսեցին աւելի  
նրանց զիմել ։ որոնք իսկապէս վտահաւթիւն էին  
վայելում ։ այսինքն վանականներին ։

Պատկերամարտութեան ժամանակներից սկը-  
սած մինչև ժԳ. դարի վերջերը վանականու-  
թիւնը կատարելապէս տիրում էր ապաշխարու-  
թեան խորհուրդին և խոստովանութեան ։ Միայն  
այս շրջանի վերջերում եկեղեցին յաջողեցաւ  
նոյն իշխանութիւնը խլել ։ առանց կարողանա-  
լու վայելել վանականների հաստատուն հեղինա-  
կութեան մենաշնորհը ։ Դեռ դարեր շարունակ  
վանական համարուում էր միակ բնգունակը  
խոստովանահայր ինչեւ և նրան ցոյց տրուած  
առանձին վտահաւթիւնը մնում է մինչև այսօր ։  
ինչպէս Մուսիայում այնպէս և յունական հոգի  
վրայ ։ Խոստովանութիւնը իւր ամբողջ էութեամբ  
յունական եկեղեցու համար օրհնաբեր է եղել ։  
Նա ամենից աւելի փրկաւետ ազդեցութիւն է ու-  
նեցել այն մտորութեան նկատմամբ որ եկեղեցա-  
կան ապաշխարանքը յառաջ բերել կարող էր ։ այ-  
սինքն թէ՛ միայն այսպէս կոչուած մահացու մեղ-  
քերն են իսկական մեղքեր ։ նա է զարգացրել նաև  
կենդանացման և ինքրեննով զբաղուելու կարողու-  
թիւնները սովորական քրիստոնեանների մէջ ։ Ուշ  
չափով յունական եկեղեցու մէջ քրիստոնէութիւնը  
ընդհանրապէս սրտի գործ է ։ նոյն չափով բարոյա-  
կան գործողութիւնը կրում է զղջման գրոշմը ։  
այսինքն վանականութեան պաշտպանած սկզբունք-  
ների արդիւնքն է ։ Բայց վանականութիւնը հոգս է  
տարել նաև որ զղջում բառը իւր ճշմարիտ  
իմաստը պահպանէ ։ այսինքն փոխանակ մտափո-  
խութեան՝ հաստատուն կամք զարգանայ ։

Բարոյական լրջութիւն զարթեցնելու համար  
մատուցած ծառայութիւնից աւելի մեծ են յու-  
նական եկեղեցու մէջ վանականութեան աստուած-

\* Ի նկատի ունիմ Ալեխիոս և Մանուկ Կոմնե-  
նոսների վեճերը (Kontroverse) ։

պաշտութեան զբացումը պահպանելու և չերմա-  
ցրնելու նկատմամբ տուած օգուաները: Ամէն մի  
եկեղեցու համար կենսական հարց է: Թէ արդեօք  
Աստուծոյ հետ կենդանի յարաբերութիւն պահ-  
ուում է նորա մէջ թէ ոչ: Իրօքը նայողը այն  
սպաւորութիւնն է ստանում: Թէ յունական եկե-  
ղեցին ներքին կենդանութիւնը կորցրել է քարացել  
է: Արօնական կեանքի կենտրոնը կազմում է այս-  
տեղ դժուարբարձնելի խորհուրդներով հարուստ  
պաշտամունքը: Խոստովանութիւնն ևս իրր պաշ-  
տամունքի մի մաս: Իրբև անքննելի գաղանփերի  
հանդիսաւոր արտայայտութիւն էական նշանակու-  
թիւն ունի: Թոների անսահման մի շարք բռնում է  
ամբողջ եկեղեցական տարին: այնպէս որ տօն  
և լուր օրերի մէջ եղած տարբերութիւնը նը-  
կատելի չէ գրեթէ: Ս: պատկերները: Իրբև տե-  
սողութեան վրայ հոգևոր-բարոյական աղբջցու-  
թիւն գործող առարկաներ՝ կազմում են պաշտա-  
մունքի անբաժան մի մասը: Այնտեղ ուր այս-  
չափ արարողութիւններ են կուտակուած միմանց  
վրայ: պէտք չէ եզրակացնել: Թէ նրանց իսկական  
նշանակութեան մասին հասկացողութիւն մնացած  
չի լինի: Թէ երևակայութեան մշուշի մէջ կկորչի  
այն գաղափարը: Թէ Աստուած հոգի է: Սա-  
կայն այս բոլորի ներքը նշմարելի է մի տեսակ  
մանկական հաւատ: որի շնորհիւ յունական եկե-  
ղեցոյ մէջ առ Աստուած ունեցած վստահութեան  
և դիւցազնական համբերութեան հրաշալի օրինակ-  
ներ են հանդէս եկել:

Վանականութիւնը Թագուցել է միշտ իւր  
մէջ յեղափոխիչ մի տարր: Յունական վանականու-  
թիւնն ևս խոստովել է երբեմն հերետիկոսական  
հոսանքների հետ և եկեղեցու արտաքին կազմա-  
կերպութեան դէմ կռուել: Այսպէս կոչուած Հե-  
զուխիստների (չրակացների) վէճի ժամանակ (1341  
— 1351): եկեղեցին պիտի լուծէր այն խնդիրը: Թէ  
վանականների ծայրայեղ ոգևորումը տանելի էր թէ  
ոչ: Խնդիրը մասնաւորապէս Աթոսի վանականների  
մասին էր: որոնք յափշտակութեան վայրկեաններ-  
ում լոյս կամ աստուածային փառք էին տես-  
նում: Եկեղեցին յայտարարեց: որ սկզբունքով  
ողևորութեան հակառակ չէ: և պահեց այսպէս իւր  
մէջ մի տարր: որի հակադրեցութեան կարօտու-  
թիւն ունէր: Միւս կողմից ևս ուղղափառ վանա-  
կանութիւնը շատ լաւ գիտէր: եկեղեցական ձևերին  
յարմարուելով իւր գաղափարները նրան հաղոր-  
դել: Պատմական քննադատութեան ներկայ պայ-  
մաններում դեռ դժուար է ասել: Թէ ինչ չափով  
ինքը վանականութիւնն յառաջ է բերել այսպիսի  
ձևեր: մշակել և իւր հոգով լեցրել նրանց: բայց  
այբարև կարելի է հաստատել: որ այդ բոլոր ձե-  
ւերի հիմնական գաղափարը վանականութեան ա-  
ռաջնորդող սկզբունքին համաձայն է և որ սա ա-

մէնից առաջ այն գործուն է: որ այդ ձևերի հոգին  
ուղիղ և անարատ պահպանել է: Եթէ եկեղեցա-  
կան պաշտամունքը իրապէս պատկերացնում է Աս-  
տուծոյ մարդկանց մէջ երևալու բարձրագոյն գաղա-  
նիքը: Եթէ ճիշտ է: որ միայն արժանաւորը կա-  
րող է այս գաղափարը տեսնել՝ ապա ուրեմն եկեղ-  
պաշտամունք յառաջ բերող շարժառիթները բու-  
լորովին նման են նրանց: որոնց վրայ վանականու-  
թեան գլխաւոր գաղափարը հիմնուած է: Այն  
պարզ միտքը: Թէ մարդկանց համար բարձրագոյն  
երջանիւթիւնը աստուածային տեսնելն է և թէ  
Աստուծուն նա կարող է միայն տեսնել: ով մեղքի  
կեղտից: կրքերի վրդովմունքից բոլորովին ազատ է  
ինչպէս վանական կեանքում: նոյնպէս և եկեղ-  
պաշտամունքի մէջ ներգործող գաղափարներ են:  
Ինչպէս որ վանականը իւր կեանքի ամենափոքր բու-  
պէներում տեսնում է Աստուծոյ դէմքը: նոյնը  
տեսնում է նաև սովորական քրիստոնեան վանա-  
կանի հետ պաշտամունքի ժամանակ: և ինչպէս որ  
վանականը խիստ ճշգրտութեամբ իւր համար յայտ-  
նութիւն է պատրաստում: այնպէս և պատրաս-  
տում է եկեղեցին 4 պահքերի միջոցաւ հաւա-  
տացեալներին: յետոյ եկող Թոները ճաշակելու  
աշխատելով որ պահեց ընթացքում իւրաքանչիւրն  
ազատուի իւր վրայ ծանրացած մեղքերից: Պաշ-  
տամունքը: որ ամէնից աւելի մօտ է առօրեայ  
կեանքին: սրանով կեանքի հետ սերտ առընդու-  
թիւն է ունենում: Քրիստոնէութեան բարձրագոյն  
նպատակն է: որ ամբողջ կեանքը մի պաշտամունք  
լինի: յունական եկեղեցու նկատմամբ աւելի կա-  
րելի է ասել՝ կեանքը համարուում է իրր նախա-  
պատրաստութիւն Աստուծոյ պաշտաման: Սրանից է  
այն վսեմ՝ ներգաշխկութիւնը: որ Թոները յա-  
ռաջ են բերում: յունական եկեղեցու մէջ: Արշափ  
խորն են գրողով անցեալ ճգնական ժամանակները  
այն միտքը: Թէ սուրբերին մերձեանալու համար  
մարդ համապատասխան արժանիք պիտի ունենայ:  
նոյնափ զօրեղ կերպով աչքի է ընկնում դորա հա-  
կադրութիւնը: երբ Թոների միջոցին սուրբն ի սրբ-  
րոց՝ պարզ: առանց որևէ միջնորդի մարդկանց  
առաջ յայտնուում է:

Յունական քրիստոնէութեան բնագործը յան-  
ձին իւր ամենայարգելի ներկայացուցիչներին՝ ման-  
կական պարզութեան և սրբազան լրջութեան զար-  
մանալի խոսնորդն է: Նրանց պարզամտութիւնը  
և կատարեալ վճռականութիւնը յիշեցնում են  
մեզ նախնական քրիստոնէական զարբեր և հին  
ժողովուրդների մահուան դիմելու անվեհերու-  
թիւնը: Մով կարող է գուշակել: Թէ արդեօք յու-  
նական եկեղեցին ապագայում զարգացման բարձր  
ինչպէս շատերը կարծում են: վանականութիւնից  
բարեփոխութիւն սպասել չի կարելի: Նա ներկայ

եկեղեցու հետ աճել է և իւր դերը կատարել, Պէտք է ստել, որ նա արդէն իւր կոչումը լրացրել է, սնուցանելով ամենանախարհական բարիքներ, և որ յունական եկեղեցին այսօր նրան է պարտական, այն ամէնը ինչ որ գեռ կենդանի է իւր մէջ\*:

Թ.

### ՕՏԱՐ Ե ԿԵՂԵՑԻՆԵՐ.

#### ՕՐԹՈԴՈՔՍ Ե ԿԵՂԵՑԻ.

Церк. Вѣстникъ թերթը մի ընդարձակ յօդուածով նկարագրում է, թէ ինչ վիճակի մէջ է եղել Օրթօդոքս արևելքն անցեալ տարին: «Պոլսոյ Տիեզ. պատրիարքութեան գլխաւոր հոգևերից մէկն էր Պրեմէ կղզու բրիտանական ազգաբնակչութեան ծանր վիճակը, որտեղ եկեղեցական կեանքը երկարատե խռովութիւնների շնորհիւ բոլորովն ընկել և եկեղեցւոյ հովիտները ցրուել էին: Եւրոպայ վերջին տարւոյ արքայորդի Պէտրոզի կղզու կառավարիչ նշանակուելով քաղաքական գրութիւնը բարեփոխուեցաւ և խաղաղութիւն հաստատուեցաւ երկրի մէջ՝ կարելի եղաւ նաև եկեղեցւոյ բարեկարգութեան մասին մտածել: Եպիսկոպոսներն ու միւս հոգևորականներն իրենց տեղերը վերադարձան, խանդարուած և աւերակ դարձած եկեղեցիներն ու վանքերը վերանորոգել սկսան, դպրոցներ բացին և ինչ: Հարկաւ հարկերը դեռ շատ մեծ է և տարիներ շարունակ է հարկաւոր մինչև գոնէ արտաքին բարեկարգութիւնը վերականգնել: Բայց ներկայ տարւոյ զբոսութեան մէջ այլ ևս դժուարութիւններ չեն մտնում գործ համար:

— Առտանդին Յ. Պատրիարքը իւր հօտի հովուութեան նկատմամբ այն կողմից նպաստաւոր հանգամանքներ է մէջ էր, որ չէզոք դիրք բռնած լինելով յայն-տաճկական պատերազմի ժամանակ, վայելում էր սուլթանի վստահութիւնը և կարող էր իւր խնդիրներին յաջող ընթացք առն տաճիկ կառավարութեան առաջ: Նորա և իւր սինոզի մի քանի կարգադրութիւնները մանաւանդ կարևոր են եկեղեցական բարեկարգութեան տեսակէտից, այսպէս՝ պատկազրութեան համար հրամայուած է, որ ամէն ջանք գործ գնեն այդ խորհուրդի որբութիւնը բարձրացնելու ժողովրդի աչքում և զգուշաւոր լինեն մանաւանդ օտար

բանաստեղծների պատկերիս. ծխական հոգևորականութեան համար խառն արգելուած է քահանայ կամ տարկաւագ ձեռնադրել, առանց որոշ ծուխի հետ կապելու՝ ձեռնադրել քահանայ 30 տարեկանից և սարկաւագ 25 տարեկանից ցած. ծխականներին արգելուած է առանց թեմական առաջնորդի դիտութեան կղերականներ ընտրել: առաջնորդներին պատու իրուում է բոլոր քահանաների և սարկաւագների ցուցակը պատրիարքարան ուղարկել, նոցա վարք ու բարքի վերայ հսկել, թող չտալ որ առանց առաջնորդին յայտնելու տեղից տեղ գնան և ինչ: Նոր կարգադրութիւններ չեն սորա ի հարկէ, բայց ցոյց են տալիս թէ ինչ քանակ համար դիտաւորու պէս և ինչ կերպ հոգ է առնում պատրիարքարանը: — Բարկանեան թերթկողու փոքր սլաւոն ազգութիւնների հետ ունեցած վէճին զայնով պատրիարքարանը ստիպուած եղաւ կրկին նոր զեջում անել սերբերին նորանով, որ Սլոպե թեմի առաջնորդ նշանակուեցաւ մի սերբ վարդապետ: Բսկ Բուդապեների հետ թէպէտ մի ժամանակ լուր տարածուեցաւ թէ հաշտութիւն կայացնելու մտադրութիւն կայ, բայց ինքը Բուդապեների Կեղարքը հերքեց այդ լուրը: Արագիւնների գրելով նա ասել է. «Եթէ յունաց պատրիարքութիւնը իւր մեղքերը ձանձախ է թող վերջ տայ հերձուածին. Բուդապեական եկեղեցին ո՛չ մի զեջում և ո՛չ մի զստորութիւն չի անի, որ ազգային շահերը դէմ լինէր, գոնէ ես: քանի այս եկեղեցու գլուխն եմ այդպիսի բան թող չեմ տայ: Ես ամենից առաջ Բուդապե եմ և նուիրել եմ ինձ Բուդապեական եկեղեցուն և Բուդապե ժողովրդին»: Պոլսում Բուդապե նոր եկեղեցու հանդիսաւոր օծումը աւելի ոյժ տուաւ հակառակութեան: — Բոսնիայ և Հերցեգովինայ օրթոդոքսները կողմից պատգամաւորութիւնը ներդրելով պատրիարքարանը փոքր ձեց նոցա ներքին գործերի մէջ խառնուել, բայց ինչպէս երևում է Բ. դրան ճշման ներքոյ այդ միջամտութիւնը հետևանք չունեցաւ: — Առտանդին ու շաղրութեան արժանի մի դէպք էր նաև Սալոբուրքի Արքայաւորը եպիսկոպոսի պատրիարքին այցելելը, թէպէտ այդ այցելութեան արդեւնքը յայտնի չէ, բայց այն հանգամանքը որ նա տեղի է ունեցել 194 անդլիական եպիսկոպոսների ժողովական լիճաւ և օրթոդոքս եկեղեցւոյ հետ յարաբերութիւն հաստատելու նրպատակով՝ ինքն ըստ ինքեան կարևոր երևոյթ է:

Անտիոքի և Նրուսադէմի պատրիարքութիւնները զբաղուած են շարունակ ներքին դժուարութիւններով և կաթոլիկ ու բողոքական միաբնակարանների դէմ մարտաւելով, որոնք կամայ կամայ խլում են նոցանից իրենց հօտը: Ներքին դժուարութեանց գլխաւոր պատճառ լինում է յայն և ա-

\* Կարևոր ամսակարգի մի քանի տղերքերակի փոփոխել և կրճատել: իմր